№ 16 Փետրվարի 1 Երեքշաբթի 1883 Փետրվարի 1 Երեքշաբթի № 16

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի *Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խաչագողի յիշատակարան։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ հաղորդում են։ «Հայոց հոգևոր ուսումնարանի ուսուցչական խումբը անցեալ տարվանից անհամեմատ լաւ է կազմակերպված։ Ուսուցիչները եռանդով աշխատում են. անցեալ տարվայ բթացնող դասաւանդութիւնը այս տարի վերջացել է, աւանդվում են զանազան նոր առարկաներ, որոնց թւում հայոց պատմութիւն։»

—

Թիւրքայ Հայաստանից եկած ճանապարհորդներից մէկը մեզ պատմում է հետևեալը։ Կարինի հայոց դաղտնի ընկերութիւնը, ասում է պատմողը, իբր թէ կազմված է եղել դեռ անցեալ պատերազմի ժամանակ։ Այժմ թիւրք կառավարութիւնը խուզարկելով այն հայերի տները, որոնք պատկանում են այդ ընկերութեանը, իբր թէ գտել է նրանց մօտ վառօդի մեծ քանակութիւն ստորերկրեայ պահեստներում, նոյնպէս մեծ քանակութիւն զանազան տեսակ զէնքերի և այդ բոլորը իբր թէ ձեռք է բերված պատերազմի խառն ժամանակ։ Այդտեղ, ասում են, գտնված է մի դրօշակ, որի մի կողմը նկարված է Քրիստոսի պատկերը, իսկ միւս կողմը հայի այնպիսի մի սարսափելի, քստմնելի տանջանք, թիւրքի ձեռքով, որից նայողը սարսուռ է զգում և այդ պատկերի տակ գրված են 16 և 61 յօդուածները։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են։ «Լսում ենք որ տեղիս գործակատարը գրել է գիւղական քահանաներին չը տանել «Մշակ» լրագիրը։ Գիւղական քահանաներից մին, անցեալ օր համարեա լաց էր լինում որ առանց իր գիտութեան գործակատարը «Մեղու» է բերել տուել նրա անունով։ Բաւական չէ, ասում էր նա, որ 4 ր. «Արարատ» ամսագրին պարտաւոր ենք տալ, թէև չենք կարդում, այժմ էլ ստիպում են մեզ «Մեղուն» տանել։—Մի տանաք, ասեցի ես։—Ես էլ մտածեցի, պատասխանեց ողորմելի տէր-հայրը, բայց դա գործակատարին վիրաւորել կը նշանակէր։ Ահա, ուրեմն, ինչ միջոցներով է տարածվում «Մեղուն»։ Հետաքրքիր կը լինէր իմանալ, արդեօք ում մեղքերի քաւութեան համար գիւղական քահանան պէտք է վճարէ տարեկան 10 ռուբլ»։

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ հետևեալը։ «Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի թեմի առաջնորդ նշանակելը ուրախալի ազդեցութիւն ունեցաւ մեզ ամենից վրա։ Որքան կարողացանք լսել, սրբազանը գործունեայ և անչափահմտիր անձ է և ուրեմն յոյս ունենք որ նա իր ուշադրութիւնը կը դարձնի դաւառների, մանաւորապէս Ախալքալաքի և Ծալկայի պէս բազմահայ վիճակի հոգևոր գործերի դրութեան վրա»։

—

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ որ այդտեղ մահուանների մէջ սարսափելի կերպով տարածված է դիֆտերիտ կոչված հիւանդութիւնը, որ անխնայ հնձում է մանկանց։ Իսկ Նուխում, որ 30,000 բնակիչ ունի, մի քաղաքային բժիշկ կայ միայն, այն էլ միշտ Նուխի չէ լինում, այլ լինում է և Աղդաշում։

—

«Արձագանք» շաբաթաթերթը կամենում է բռնել մեզ մի հակասութեան մէջ։ Մենք ասեցինք որ ինչպէս Կրիկէնի համար արեցինք, այն է նրա մահվան լուրը սև շրջանակով հրատարակեցինք, նոյնը կանէինք մեր ամեն մի աշխատակցի յիշատակի համար, որին դժբաղդութիւն կունենայինք կորցնելու։ Դրան «Արձագանք» շաբաթաթերթը պատասխանում է որ մենք սև շրջանակով չը հրատարակեցինք Ամերիկեանի մահվան լուրը, թէև նա «Մշակի» աշխատակից էր։ Այո, նա մեր աշխատակից էր առաջ, բայց մահվան տարին ոչ թէ միայն մեր աշխատակից չէր, բայց հեռանալով մեզանից, անցել էր ոչ թէ միայն հակառակ բանակը, բայց և գործ էր դնում մեզ թշնամական մի լրագրի էջերում ամեն միջոցներ մեզ զրպարտելու համար։ Մենք չէինք ասում այս բանը, բայց «Արձագանքի» յարձակումները մեզ դէմ և «Մեղուի» զրպարտութիւնները ստիպեցին մեզ այս բանն ասելու։ Ցեսենենք եթէ մէկը, թէև մի ժամանակ եղել է կամ «Փորձի» կամ «Արձագանքի», կամ «Մեղուի» աշխատակից, հեռանալով այդ խմբագրութիւններից, էլ ասա ու զրպարտութիւն չը թողնի որ չը թափի «Մեղուի», «Արձագանքի», Սիմէօնեանցի և Աբզար Յովհաննիսեանի վրա,—տեսնենք, ասում ենք, այդ պարոնները որքան հերոսութիւն կունենան սաւորվել իրանց զրպարտողի յիշատակի համար։ Կամ այդ զրպարտողը պէտք է մի շատ նշանաւոր հասարակական գործիչ լինի, որին անձնական վիրաւորանքը կարելի է ներել, աչքի առաջ ունենալով նրա մեծ հեղինակութիւնը։ Մենք կեղծաւորութիւն անել չը գիտենք, մենք չենք սիրում մեզ սուրբ, կամ ինչպէս ասում են՝ սուտ քրիստոս, սուտ ճգնաւոր ներկայացնել։ Մեզ դէմ զրպարտողների, անվայել կերպով մեզ հետ վարվողների համար մենք սուտ արտասուք չենք թափի, մենք երբէք չենք մոռանայ մեզ հասցրած վիրաւորանքը։ Մենք երբէք սև շրջանակ չենք դնի այն մարդկանց յիշատակի համար, որոնք իրանց կեանքի ժամանակ աշխատում էին մեզ ցեխի հետ հաւասարեցնել, մեզ ջնասել, մեզ ոտնակոխ անել, մանաւանդ նրանց յիշատակին, որոնք առաջ մեր կուսակիցներ են եղել, յետոյ մեզ դաւաճանել են։ Մենք այսպէս ենք վարվում մարդկանց հետ։ Եթէ ոչ, շատ լաւ բան կը լինէր, կեանքի ժամանակ ամեն տեսակ վատ բան անել, իսկ մեռնելուց յետոյ նոյնքան փառք վայելել, նոյնքան գովասանք վայելել, որքան օրինաւոր մարդիկ։ Ոչ, թող լաւը մահից յետոյ վարձատրվի, իսկ վատը պատժվի։ Լաւ բան կը լինէր եթէ մահը ամեն կեղտոտ ու անպիտան բան դրստող լինէր։

—

Խաւարասէր և յետադէմ «Մեղուն» երբ կարդաց «Մշակի» մէջ որ մենք ունենք արդէն 1000 բաժանորդ, մտածեց թէ ազատամիտ ու առաջադէմ լինելը երևում է թէ շահաւէտ գործ է և յանկարծ փոխեց իր լեզուն։ «Ազատամիտն ու առաջադէմը իսկապէս «Մեղուն» է և ոչ թէ «Մշակը» սկսեց նա բարձրաձայն կանչել։ Այսպէս են անում Մոսկվայի Նաժօվայա փողոցի մանրավաճառները, երբ մի չաղ առնող են տեսնում. «пожалуйте къ намъ—съ, настоящій товаръ у насъ—съ, а у него фальшивый-съ» սկսում են դրանք աղաղակել։

—

«Кавказъ» լրագրի խմբագիրը մեծ սրամտութիւն է ցոյց տալիս, հէնց որ խօսքը լինում է հուց դաղտնի ծառայի քնարանը ներս սողալ..

Քաւոր Պետրոսի երկաթի ձեռքերը երկուսին ևս ճնշեցին մի և նոյն անկողնի մէջ։ Նրանք քնած էին. աղջկայ գլուխը դրած էր սիրեկանի թևքի վրա։ Նրանք զարթեցան։

—Սենեակների բանալիները, հարցրեց քաւոր Պետրոսը։

Նրանք փորձեցին ձիչ բարձրացնել։ Բայց քաւոր Պետրոսի սպառնալիքը լռեցրեց նրանց։ Բանալիները իսկոյն մեր ձեռքը անցան։

—Դու այդ նաղելի սիրահարներին կը պահես միմանց գրկում, մինչև ես գործը վերջացնեմ... ասաց քաւոր Պետրոսը և հեռացաւ։

Մանկահասակ աղախինը երկիւղից իսկոյն ուշաթափ եղաւ և դիակ դարձաւ իմ ճանկերի մէջ։ Ես գործ ունեի այժմ միայն կատաղած սպասաւորի հետ։ Ճշմարիտը խոստովանած, այդ Գոլիաթը այնքան ուժեղ էր, որ ես հազիւ կարողանում էի զսպել նրան։ Իմ դրութիւնը նախանձելի չէր։ Մենք կորած էինք, եթէ նա դուրս պռծնէր իմ ձեռքից։ Ուրիշ ճար չը կար, պէտք էր այդ գաղտնին հանդստացնել։ Իմ ծանր տապարի մի հարուածը գլորեց նրա գլուխը մահճակալից ցած։ Տաք արիւնը դուրս փչեց պարանոցից սիրուհու կուրծքի վրա...

Դա եղեռնագործութեան ամենասարսափելին էր, որ ես կատարել եմ իմ կեանքում։ Գաղտնային անդթութիւնը այդ դէպքում անցնում է ամեն վայրենութիւնից։ Սպանել այն բոպէում, երբ երկու անմեղ արարածներ, իրանց հոգու բոլոր քնքշութեամբ գրկախառնված, սիրում են միմանց,—սպանել սէրը,—դա սոսկալի չարագործութիւն է...

Մինչև ես Կայէնի նման կանգնած էի իմ զոհի մօտ, լսելի եղաւ քաւոր Պետրոսի ձայնը.

—Հեռանանք...

Միւս առաւօտը քաւոր Պետրոսը հանդարտ, հանգիստ տրամադրութեամբ, ինձ իր հետ առնելով, մտանք հասարակաց սեղանատունը նախաճաշիկ ուտելու։ Հիւրանոցի ամբողջ խօսակցութիւնը գի-

# ԽԱՉԱԳՈՂԻ

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Երբ որ մենք ներս մտանք, թուխակը արտասանեց մի քանի մարդկային բառեր։ Քաւոր Պետրոսը զարհուրեցաւ... Այդ մարդը, որ հազար սատանաներից երկիւղ չունէր.—«սատանան... սատանան»... աղաղակելով, ձիչ բարձրացնելով, դուրս փախաւ։ Ցանտիկնոջ վրա ցաւալի ներգործութիւն ունեցաւ, երբ տեսաւ, որ իր թուխակը անզգուշութեամբ վախեցրեց խեղճ մարդուն։ Նա իր սպասաւորին ուղարկեց, մի կերպով յետ բերեցին քաւոր Պետրոսին։ Պառաւը երկար աշխատում էր համոզել, հանդստացնել նրան, հաւատացնելով, որ իր տեսածը սատանայ չէ, այլ հասարակ թռչուն է, միայն սովորել է մի քանի բառեր արտասանել։ Քաւոր Պետրոսը, որ մի քանի անդամ եղել էր թուխակների հայրենիքում և ահագին խումբերով էր տեսել նրանց Հնդկաստանի կղզիներում,—վերջապէս համոզվեցաւ, որ իր տեսածը սատանայ չէր, մանաւանդ երբ պառաւը դրեց նրան իր ոսկրացած ձեռքի վրա և սկսեց շաքար ուտացնել։

Բարեսիրտ ամուսինները, քաւոր Պետրոսին աւելի մխիթարելու համար, դիտմամբ թանգ վճարելով գնեցին մեզանից զանազան իրեղէններ, որոնք գուցէ նրանց ամենևին պէտք չէին։ Մենք շնորհակալութիւն յայտնելով, և նրանց երկար կեանք բարեմաղթելով, հեռացանք։

Մենք իջանել էինք մի կեղտոտ հիւրանոցում, որ առելի նման էր գինետան, այն զանազանութեամբ միայն, որ այստեղ կարելի էր գտնել խիստ վատ կահաւորած սենեակներ։ Նրա ընդարձակ բակում իրանց ձիաները հանդստացնելու համար կանգնում էին կառապանները։ Այդ պատճառով այդ հիւրանոցը այն տեսակներից էր, ուր ամբողջ գիշերը յաճախորդները չեն պակասում. անդադար շատերը մտնում են և դուրս են գալիս։ Ես այդ հարբած, խելագարված խառնիճաղանճի մէջ տիրում էր այնպիսի բաքսային խառնաշփոթութիւն, որ ոչ ոք միմանց չէր հասկանում։ Այդ բոլորը մեզ համար շատ նպաստաւոր էր։ Մեզ շատ հնարաւոր էր դիշերվայ մի որոշեալ ժամում դուրս գալ այնտեղից, գնալ ուր որ ցանկանում էինք, կատարել մեր գործը և կրկին վերադառնալ, առանց ոչ ոքից նկատելի լինելու։

Քաւոր Պետրոսը մի գիշեր չը գնաց հասարակաց սեղանատունը ընթրիք ուտելու, այլ պահանջեց մի առանձին կտոր սառն միս և մի շիշ արաղ, որ բերեցին մեր սենեակը։ Նա մի քանի մարդու չափ ուտել կարող էր, իսկ մի ամբողջ շիշ արաղը նրա սովորական խմիչքն էր ընթրիքի ժամանակ։ Ես արաղ չէի սիրում, պահանջեցի ինձ համար մի շիշ գինի։

Մենք տեղեկացել էինք, որ այն տունը, որտեղ թուխակը վախեցրեց քաւոր Պետրոսին, փոքրիկ քաղաքի հարուստ տներից մէկին էր։ Մենք գիտէինք, որ երկու ծերունի ամուսինները ունէին իրանց տան մէջ մի նշանաւոր դուստր, որ պահել էին սև օրվայ համար։

Ընթրիքից յետոյ քաւոր Պետրոսը հարցրեց ինձ.

—Մուրադ, դու ինչ տեսակ զէնք աւելի լաւ գործածել գիտես։

—Ատրճանակներ։ Մի օր գրաղ եկանք, ես հինգ անդամ մինը միւսի ետևից կարողացայ խփել օդի մէջ նետած խնձորը։

Քաւոր Պետրոսին երբէք գիւր չէր գալիս, երբ մէկը սկսում էր նրա մօտ պարծենալ։ Պարծենալու համար նրա կարծիքով պէտք էր շատ մեծ գործ կատարած լինել։

—Այդ աղմուկ հանող զէնքերը պէտք չեն, երբ ուզում ես սուտուփուս գործ կատարել, ասաց նա։

—Աւելի լաւ են խուլ ումունջ զէնքերը, որ ձայն չը հանեն։

Ես հասկացայ նրա միտքը։

—Ուրեմն ես կարող եմ վեր առնել իմ տապարը։

—Վատ չէ։

Գիշերից բաւական անցել էր, երբ մենք դուրս եկանք հիւրանոցից։ Անձրևը մանր կաթիլներով մաղվում էր։ Փողոցները դատարկված էին, մարդիկ չէին երևում։ Գիշերային թանձր խաւարի մէջ մրափում էր քաղաքը։

Անցնելով մի քանի խուլ փողոցներ, մենք արդէն գտնվում էինք յիշեալ տան մօտ, որտեղ թուխակը վախեցրեց քաւոր Պետրոսին։

—Եթէ շունը աղմուկ չը բարձրացնէ, լաւ է, ասեցի ես։

—Ինչ շուն, հարցրեց քաւոր Պետրոսը։

—Երբ ցերեկով մտանք այստեղ, ես նկատեցի մի ահագին շուն, որ շղթայով կապված էր բակում։ Գիշերը բաց են թողնում նրան։

—Նա հիմա հանդուցեալների կարգումն է դասված։

Քաւոր Պետրոսի խօսքերից երևաց, որ նա մի անդամ ևս մտել էր այս տունը, այն անցքից յետոյ, որ թուխակը վախեցրեց նրան։ Վերջին անդամ յայտնվել էր այնտեղ մուրացկանի կերպարանքով և միջոց էր գտել ոչ միայն թունաւորելու շանը, այլ լաւ հետազօտելու տան դիրքը, մուտքերը և այլն։

Տան ընդարձակ բակը շրջապատած էր փայտեայ ցանկապատով, որը այնքան ցածր էր, որ մի առանձին ընդդիմադրութիւն չարեց մեզ բակը իջնելու ժամանակ։ Այժմ հարկաւոր էր մի կերպով ներս սողալ սենեակների մէջ։ Մի լուսամուտ, որ ցերեկով նկատել էինք, ուղղակի բացվում էր սպասաւորների քնարանի մէջ։ Գիշերային տօթի պատճառով լուսամուտը բաց էր թողած։ Քաւոր Պետրոսը Հերքուլէսի ոյժ ունէր, իսկ ես թեթևաշարժ էի, որպէս առիւծ։ Երկու ահագին ջրի տակառները, որ կանգնած էին բակում անիւների վրա, միմանց վրա դնելը, և այդ սանդուղքներով լուսամուտից ներս մտնելը՝—մի բոպէի գործ եղաւ։ Մենք գտանք սպասաւորի սենեակում և աղախնին։ Երևում էր, այդ դեռահաս աղջիկը սովորութիւն ունէր երբեմն իր տիրուհուց գաղտնի ծառայի քնարանը ներս սողալ..

Քաւոր Պետրոսի երկաթի ձեռքերը երկուսին ևս ճնշեցին մի և նոյն անկողնի մէջ։ Նրանք քնած էին. աղջկայ գլուխը դրած էր սիրեկանի թևքի վրա։ Նրանք զարթեցան։

—Սենեակների բանալիները, հարցրեց քաւոր Պետրոսը։

Նրանք փորձեցին ձիչ բարձրացնել։ Բայց քաւոր Պետրոսի սպառնալիքը լռեցրեց նրանց։ Բանալիները իսկոյն մեր ձեռքը անցան։

—Դու այդ նաղելի սիրահարներին կը պահես միմանց գրկում, մինչև ես գործը վերջացնեմ... ասաց քաւոր Պետրոսը և հեռացաւ։

Մանկահասակ աղախինը երկիւղից իսկոյն ուշաթափ եղաւ և դիակ դարձաւ իմ ճանկերի մէջ։ Ես գործ ունեի այժմ միայն կատաղած սպասաւորի հետ։ Ճշմարիտը խոստովանած, այդ Գոլիաթը այնքան ուժեղ էր, որ ես հազիւ կարողանում էի զսպել նրան։ Իմ դրութիւնը նախանձելի չէր։ Մենք կորած էինք, եթէ նա դուրս պռծնէր իմ ձեռքից։ Ուրիշ ճար չը կար, պէտք էր այդ գաղտնին հանդստացնել։ Իմ ծանր տապարի մի հարուածը գլորեց նրա գլուխը մահճակալից ցած։ Տաք արիւնը դուրս փչեց պարանոցից սիրուհու կուրծքի վրա...

Դա եղեռնագործութեան ամենասարսափելին էր, որ ես կատարել եմ իմ կեանքում։ Գաղտնային անդթութիւնը այդ դէպքում անցնում է ամեն վայրենութիւնից։ Սպանել այն բոպէում, երբ երկու անմեղ արարածներ, իրանց հոգու բոլոր քնքշութեամբ գրկախառնված, սիրում են միմանց,—սպանել սէրը,—դա սոսկալի չարագործութիւն է...

Մինչև ես Կայէնի նման կանգնած էի իմ զոհի մօտ, լսելի եղաւ քաւոր Պետրոսի ձայնը.

—Հեռանանք...

Միւս առաւօտը քաւոր Պետրոսը հանդարտ, հանգիստ տրամադրութեամբ, ինձ իր հետ առնելով, մտանք հասարակաց սեղանատունը նախաճաշիկ ուտելու։ Հիւրանոցի ամբողջ խօսակցութիւնը գի-

Գրիգոր Արծրունու վրա, կամ որպէս խմբագրի, կամ որպէս դումայի ձայնաւորի վրա, անմիջապէս յիշվում է Գրիգոր Արծրունու քարվանսարան: Ինչ կապ ունի քարվանսարան «Մշակի» խմբագրութեան և կամ դումայի ընտրութիւնների հետ, մենք չը գիտենք: Երևի նոյնքան կապ, որքան «Кавказъ» լրագրի խմբագիր Իշխան Էրիստովի և այն քարվանսարայի մէջ, որտեղ գետեղված է «Кавказъ» լրագրի խմբագրութիւնը և որ պատկանում է Իշխան Էրիստովի կնոջ եղբօրը, պարոն Սարաջևին, որ նոյնպէս ձայնաւոր է Թիֆլիսի դումայի մէջ: Եւ ահա մենք էլ կը ներկայացնենք հետևեալ պատկերը ընթերցողներին: Իշխան Էրիստով, իր անարծագի քարվանսարայի վերի յարկից բարձրաձայն պաշտպանում է քաղաքագլուխ Մատինովին: Այնպէս չէ՞ պ. Իշխան: Խնդրում ենք այդ պատկերը ձեր հետևեալ համարի ֆելիետոնում զետեղէք: Եթէ ոչ, ձեր թանդագին սրամտութեան պաչարը չուտով կը սպառվի:

—

Ստացանք ԴԵՐԲԷՆԴԻՑ պ. Շահնազարեան զէ-Շատուրից 10 ռուբլ հետևեալ նամակով. «Ուղարկելով նամակովս 10 ռուբլ իմ վճարս Կ. Պոլսի հայոց «Միացեալ ընկերութեան» այս 1883 թուականի համար, խնդրեմ նեղութիւն կրէք հասցնել իմ այդ նուէրը ուր հարկն է:»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են: «Ցեղիս փոստատան մէջ, լրագիրներ ու նամակներ խառն ի խուռն վեր ածած են լինում: Նամակ կամ լրագիր հարցնողին պատասխանում են «вотъ ищите сами.» Ում լրագիր, ում մասնաւոր նամակը ուզենաք, կարող էք վեր առնել: Խնդրում ենք փոստային բարձր վարչութեան ուշադրութիւնը այս երևոյթի վրա, որովհետև միջոց չունենք մշտապէս պատուիրած նամակներ ուղարկելու կամ ստանալու, իսկ հասարակ նամակներ այսպիսով կարող են կորչել:»

—

Շաբաթ օր, յունվարի 29-ին կայացաւ Արծրունու թատրոնում զօկտոր Ատեփէ Արասխանեանցի երկրորդ դասախօսութիւնը քաղաքատնտեսութեան վրա: Այս անգամ երիտասարդ դասախօսը անհամեմատ աւելի լաւ էր խօսում քան թէ առաջին անգամ: Պ. Արասխանեանց, պէտք խոստովանվել,

---

չերվայ անցքի մասին էր:

—Ինչ է պատահել, հարցրեց քաւոր Պետրոսը իր մօտ նստած մի արհեստաւորից, որ դատարկում էր թէյի եօթերորդ բաժակը:

—Էլ ինչ պէտք է լինի, պատասխանեց արհեստաւորը ցաւակցաբար,—այս գիշեր անյայտ չարագործներ մտել են մի տուն, ծերունի տան-տէրերին, թէ ամուսնին և թէ կնոջը, երկուսին էլ խեղդել են, ծառայի գլուխը կտրել են, տանիցը ուրիշ բան չեն տարել, բացի զուտ փողերից: Ասում են տան հաղարից աւել կը լինի:

—Անիծեալներ... այդ ինչ անխղճութիւն է... պատասխանեց քաւոր Պետրոսը նոյնպէս ցաւակցաբար:—Ինչպէս Աստուած չէ պատժում այս տեսակ չարագործներին... խեղդել ծերունի մարդկանց,—դա որքան անզթութիւն է...

Մենք մի քանի օր ևս բոլորովին անվրդով կերպով շարունակեցինք մեր առևտուրը, յետոյ թողեցինք այդ քաղաքը: Ոչ ոք կասկած ունենալ չէր կարող խեղճ մանրավաճառի վրա, որը թութակից անդամ վախենում էր, որը մի քանի օր առաջ մտնելով նոյն տունը, օրհնում էր, բարեմաղթութիւններ էր կարդում և երկար կեանք էր ցանկանում երկու ծերունիներին, որովհետև գնեցին նրանից բաւական վաճառքներ աւելի թանգ գնով,—այո, ոչ ոք երևակայել անգամ չէր կարող, որ նոյն «երկար կեանք» ցանկացողը ընդունակ կը լինէր կարճելու նրանց կեանքը...

Թողնելով յիշեալ քաղաքը, մենք անցանք մի անծանօթ գաւառ: Առհասարակ ամեն մի յանցանք գործած տեղից երբ հեռանում էինք, թողնում էինք մեր ետևից ահագին տարածութիւն: Այդ երկիրը այնքան ընդարձակ էր, որ ամեն տեղ բացվում էր մեր առջև մի նոր ասպարէզ...

Դ.

## ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Տասն և եօթն տարեկան էի ես, երբ ոտքս դուրս դրեցի հայրենական երկրից: Այն օրից անցել էր եօթն տարի ևս, որ ես թափառում էի օտարութեան մէջ: Այդ եօթն տարվայ ընթացքում, կարգիտէ հետաքրքիր դարձնել իր դասախօսութիւնները, գեղեցիկ կերպով դասաւորելով իր նիւթերը և մատչելի, վերին աստիճանի հասկանալի կերպով բացատրելով լսողներին իր ուզած մտքերը: Շնորհաւորում ենք երիտասարդ դասախօսին իր երկրորդ դասախօսութեան կատարեալ աջողութեան համար: Այդ երկրորդ դասախօսութիւնը մանաւանդ այն պատճառով գրաւեց մեր և շատերի ուշադրութիւնը աւելի քան առաջինը, որովհետև պարունակում էր իր մէջ մեր հասարակութեան համար շատ կարևոր գործնական հայեացքներ, ինչպէս հայեացքներ հողի ըէնտայի վրա, երկրագործական այլ և այլ սիստեմների վրա, երկրագործութեան նշանակութեան վրա մարդկութեան կուլտուրական այլ գործունէութիւնների շարքում, և այլն: Ցոյս ունենք որ Թիֆլիսի հասարակութիւնը հետզհետէ դասախօսութիւնների ճաշակն առնելով, աւելի և աւելի կը յաճախէ պ. Արասխանեանցի օգտաւէտ և միանգամայն հետաքրքիր դասախօսութիւններին:

—

«Արձագանք» շաբաթաթերթը սխալվում է կարծելով որ մենք հասարակական հիւանդութիւն խօսք վերաբերել ենք որ և է անյայտ թօխմախեանին կամ նրա նմաններին, ոչ. մենք այդ վերնագրով մեր առաջնորդող յօդուածում խօսել ենք յատկապէս Սիմէօնեանցի, «Մեղուի» յօբելեանի և այն յայտնի հասարակութեան մասին, որ ուզում է Սիմէոնեանցի պէս մարդուն, այն հասարակութեան, որ ներկայ է գտնվել նրա յօբելեանին և որից ժամանակով նոյն ներկայ գտնվողների զաւակները հասակ առնելով, կամաչեն իրանց հայրերի համար, կը կարմրեն նրանց արածի համար:

---

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Տրապիզոն յունվար 22

Վաղուց արդէն կուզէի «Մշակ»-ի ընթերցողները լաւ կերպով ծանօթացնել Կ. Պոլսոյ «Մասիս» պատուական լրագրի հետ, բայց յարմար առիթը կը պակսէր ինձմէ: Ահա առիթը կը ներկայանայ և ես կը սկսեմ գրել: «Մասիսը» երեսուն երեք տարի է որ կը հրատարակուի, ուրեմն իւր հասակաւ հայոց ամենէն պառաւ թերթն է, և իւր հնութեամբ «Մեղուէն» աւելի պարծենալու իրաւունք ունի եթէ սոսկ հնութեամբ մարդ կարող է պարծենալ: Այս երեսուն երեք տարվայ գոյութեան մէջ «Մասիս»-ը միլիոնաւոր թերթեր է մրոտեր, հազարաւոր իրարու հակասական խնդիրներ է պաշտպաներ: Վեց ամիս խաւարասէր, երբեք ամիս ազատական է դարձեր, և աւելի զէշը այն է որ երկար ժամանակ խաւարը և լոյսը իրար խառնելով մէկ այնպիսի կերպարանք է ստացած, որ ինչ ըլալը յայտնի չէ. այս լրագրին խմբագիրն է պ. Կարապետ Իսթիւճեան որ փոխանակ թարգմանիչ լինելու՝ սխալուեր խմբագիր է դարձեր, վասն զի խմբագրութեան համար ունեցած բազմաթիւ պակասութեանց փոխարէն ունի խիստ շատ առաւելութիւններ իբրև վէպերու թարգմանիչ, սա ինքն է «Թափառական հրէայի» ճարտար թարգմանիչը. լաւ կը թարգմանէ, բայց ինքնիրեն երկու տող գրելու կը դժուարանայ:

Ամիսներ կանցնեն և պ. Իսթիւճեան գրիչ չարժած չը լինիր Մասիսներու մէջ: Անցեալ օրեր Պոլսոյ հին լրագիրները կը թղթատէի, որոց մէջ «Մասիսի» խմբագիրը եաղաբ-պօղաբ (գրողջնջող) կանուանէին, այսինքն կը գրէ կարէ և ոչինչ չը հրատարակէր: Առաջ «Մասիսը» կը նմանէր մուրացկանի մը պարկին, ուր ինչ որ ուզէիր կը ձգէիր, նա չնորհակալութեամբ կը հրատարակէր, այժմ չնորհիւ բազմախօս (շատախօս չանուանելու համար) պ. Բիւզանդին, մուրալու այնչափ պէտք չունի. զի վերոյիշեալ պարոնի շարունակելի յօդուածները այնչափ երկայն են որ ժողովրդի լեզուով Եղիա մարգարէին կը հասնին:

Եթէ պ. Իսթիւճեանին դիմես հարցունելու համար թէ ինչ ուղղութիւն ունի ձեր լրագիրը, ինչ սկզբունքի կը հետևի, անշուշտ պիտի պատասխանէ թէ գրաբարի վսեմ ոճին?: «Մասիսը» գրեթէ ուղղութիւն չունի, նորա ուղղութիւնը և նպատակը իւր լրագրի ոճը և լեզուն ընդհանրացնել է: Եթէ «Մասիս» իւր երեսուն երեք տարուայ գոյութեան միջոցին մէջ լաւ կամ վատ մեծ բան մը ըրած է, այն է իւր լրագրի լեզուն Թիւրքիայի հայոց մէջ մասամբ մը տարածելը:

Ես չեմ ուզեր քննել, թէ այդ ըրածը օգտակար թէ վնասակար է, միայն սա կուզեմ յիշել թէ Թիւրքական-Հայաստանի մէջ այդ լեզուին տարածումը ի վնաս գաւառական բարբառներու է և որ այս գաւառական բարբառները մեր հայոց կենդանի լեզուին դանձարաններն են:

«Մասիսը» յօդուածի մը պարունակութեամբ ա[...] չափ չը հետաքրքրվիր, որչափ լեզուովը: «Մասիս[...] բարեսիրտ է, ամեն տեսակ յօդուած կը հրա[...] կէ, պարունակութիւնը կուզէ լինի ազատա[...] կուզէ լինի պահպանողական, միայն թէ լեզ[...] լինի գրաբարեան: «Մասիսը» մինչև այսօր տ[...] զանազան լուրէն ի զատ որոշ գաղափարի մը [...] բողիչ, որոշ մտքերու սերմանիչ երբէք չէ եղ[...] «Մեղուն» այս պարագայի մէջ թէպէտ և ի չ[...] թէպէտ և դէպի խաւարը, մտքեր քարոզած է. «Մ[...] սիսը» այդ ալ չէ կարողացած ընել:

«Մեղուն» խաւարասէր որոշ դրօշակ մը պար[...] է և իր դրօշակին վայել ամեն միջոցներ ձ[...] կառնու ի հարկին. Աղգին և եկեղեցո[...] թշնամի, խաւարասէրներուն այս գլխաւ[...] ընդհանուր զէնքը «Մասիսը» «Մեղուին» չափ[...] կրնար գործածել:

«Մասիսի» աշխատակիցները ինչպէս պ. Շա[...] գրամ, պ. Բիւզանդ, իւրեանց խմբագրապետ[...] աւելի ճարտար են վերոյիշեալ զէնքը գործածել[...] մէջ: Ապաղային թողնելով պ. Շամշադրամի[...] սին խօսել, եթէ պահանջուելու լինի, պ. Բիւ[...] զի մասին պիտի խօսեմ, որովհետև յունվար[...] թիւ «Մասիսով» հրատարակած է գիս, կամ Պոլս[...] մասին իմ կարծիքը փոխել, որով և իրեն մա[...] կամ իրեն մէկ յօդուածին պատասխանել, [...] պոլսեցիները կը պաշտպանէ: Այս հրաւէրը [...] ընդուներ եթէ ես ամբողջութեամբ իմ մտքը [...] ցատրած լինէի:

Անցեալ տարի մէկ երկու յօդուածներու[...] պոլսեցոց մասին ակնարկութիւններ ընելով՝ յ[...] նած էի թէ՝ ոչ Պոլսոյ մամուլը, ոչ Պոլսոյ [...] սուցչական մարմինը, ոչ Պոլսոյ ազգային ժ[...] ները, մէկ խօսքով Պոլսոյ մեղկացած հայ[...] շօչափելի և ոչ մէկ օգուտ չեն ըրած բուն [...] կա-Հայաստանի մէջ բնակող հայերուն:

Վերոյիշեալ պարոնը, պոլսեցոց Տաճկահա[...] տանի մասին ըրած ջանքերին ջատագովելով, [...] կու գլխաւոր կէտերու վրայ կը յենու. Ա. Պ[...] զէպի Հայաստան գնացած ուսուցիչներուն. Բ. [...] սէն տարածուած լրագիրներուն և գրքերուն վ[...] Պարոնի 'ի պաշտպանութիւն իւր դատին յա[...] բերած փաստերը՝ աւելի պիտի դատապար[...] պոլսեցիները քան թէ արդարացնեն, զի լաւ է [...] գործել, քան թէ գործելով՝ ապականել, լաւ է [...] ռել, պապանձել, քան թէ խաւար մտքեր քարոզ[...] Մարդ իրեն կարողութենէն վեր գործ մը ստան[...] նելու չէ: Պոլսոյ ուսուցչական խմբին այժէն վեր[...]

---

մէջ: Այն ժամանակ ես մտածեցի մօրս վիճակի վրա և այդ պատճառով ծախած աւանակիս արծաթը ուղարկեցի նրան: Իսկ այնուհետև որքան դումարներ անցան իմ ձեռքը, բայց միանգամ զոնէ չը մտածեցի, թէ աղքատութեան մէջ ապրող մայր ունեմ և որը մնացած քոյրեր ունեմ: Ցարմանալի փոփոխութիւն: Պանդխտութիւնը ինչպէս քարացնում է մարդու սիրտը... Ինչպէս կարծրացնում է բոլոր քնքուշ զգացմունքները: «Աչքից հեռու, սրտից հեռու»—ասում է հայկական առածը: Դա կատարվել էր իմ հետ:

Այդ բոլոր մտածութիւնները զարթնեցան իմ մէջ այն ժամանակ, երբ յանկարծ ստացայ մօրիցս մի նամակ: Ամբողջ եօթն տարի օտարութեան մէջ ապրելով, այդ առաջին նամակն էր, որ ստանում էի մուացված հայրենիքից: Նամակը հասաւ ինձ մի խաչագողի ձեռքով, որ եկել էր Պարսկաստանից: Նրա թղթատարից անցել էր աւելի քան մի տարի: Դա համարվում է շատ նոր նամակներից մէկը, որ մեր դասակարգի պանդուխտները բախտ են ունենում ստանալու իրանց ընտանիքից: Բոլոր ժամանակը նա մնացել էր նամակաբերի ծոցում, սպասելով, որ մի տեղում կը հանդիպէ ինձ և կը յանձնէ:

Կարծես, դառն արտասուքներով գրված լինէր այդ ողբալի նամակը: Նրա մէջ նկարագրված էր մօրս և քոյրերիս կրած նեղութիւնները ինձանից յետոյ. նկարագրված էր կառավարութեան սարվաղների ու ֆէլրաշների գործ դրած բարբարոսութիւնները, նկարագրված էր մեր ընտանիքի թշուառ դրութիւնը, և իրանց կրած ցաւերը իմ պանդխտութեան մասին և այլն: Նամակը վերջանում էր այսպիսի խօսքերով. «Մուրադ, ինչպէս են վճարում զաւակները փոխարէնը այն կաթի, որով մայրը մնուցանում է որդուն... Դու մոռացար, բոլորը մոռացար... Դու մոռացար զժբախտ մօրդ և թշուառ քոյրերիդ... Դու մոռացար Սառային, որ մինչև այսօր էլ սիրում է քեզ... որին դու ևս մի ժամանակ սիրում էիր»...

Ո՛րքան ազդու է լինում մօր խօսքը: Իմ բոլոր ապերախտութիւնները մի բոպէում նկարվեց[...] իմ աչքերի առջև: Կարծես, իմ ականջներին զ[...] կում էր մի դառն, յանդիմանական անէջք. «[...] անառակ որդի ես»...

Իմ սիրտը լցվեց ցաւերով: Մի բան միայն մ[...] թարում էր ինձ, որ այդ նամակից տեղեկացայ, [...] արարածները, որ մի ժամանակ սիրելի են եղ[...] ինձ, դեռ կենդանի են:

Ես հէնց նոյն օրը յայտնեցի քաւոր Պետրոս[...] նամակի բովանդակութիւնը: Նա ցանկացաւ տ[...] նել խաչագողին, որի ձեռքով հասաւ ինձ նամ[...] կը, բայց նամակաբերը արդէն անհետացել էր: [...] կու տարբեր խումբերի պատկանող խաչագողն[...] երբէք մի մի և նոյն սահմանում չեն գործո[...] Նա հէնց որ տեսաւ մեզ, իսկոյն հեռացաւ մ[...] գտնված տեղից:

Քաւոր Պետրոսը կարգադրեց մի գումար [...] զարկել մեր և իր ընտանիքի ծախքերի համ[...] Երևում էր, որ նա էլ նոր յիշեց, որ ինքը նոյ[...] պէս կին ունի, զաւակներ ունի, կարօտութի[...] մէջ թողած ազգականներ ունի:

Այժմեան մեր լքված տեղը այն քաղաքն էր, [...] ընտրել էինք մեզ համար որպէս գլխաւոր կենտ[...] րոն: Պատահում էր, որ ամիսներով կորչում էինք [...] թափառում էինք զանազան երկրներ, և մեր ձ[...] քը ընկած արծաթը հաւաքում էինք այստեղ: Ա[...] քաղաքում կար մի բարեսիրտ և արդար սեղան[...] տոր, որը քաւոր Պետրոսի վաղեմի ծանօթն է: [...] Մեր փողերը յանձնում էինք նրան: Սեղանաւոր[...] ճանաչում էր մեզ մեր իսկական անուններով: Ն[...] գիտէր, որ մենք օրտեղացի ենք, ինչ մարդիկ ենք[...] բայց չը գիտէր մեր իսկական պարապմունքը: [...] Մենք յայտնի էինք նրան իբրև օրինաւոր վաճա[...] ռականներ, որ ասիական ապրանքների առևտ[...] են անում: Բայց թէ հեռու տեղերում ինչ դ[...] ծերով էինք զբաղված, կամ ինչ միջոցներով ա[...] դումարները հաւաքվում էին մեր ձեռքում,—դրան[...] մասին նա ոչինչ տեղեկութիւն չունէր:

(Կը շարունակվի)

Ցաճկա-Հայաստանի լուսաւորութեան մեծ գործը յառաջ տանելը։ Ցաճկա-Հայաստանի մէջ գործելու գնացող հայրենիքին ծառայել ուզող հայ ուսուցիչը բարձր զարգացումը ստացած, ժողովրդեան կեանքը իմաստասիրած, մանկավարժական ուսում ստացած և որ առաւելն է պատրաստուած՝ ամէն տեսակ դժուարութիւններ և զոհողութիւններ յանձն առնելու անձնաւորութիւն մը պէտք է լինի։ Հարց ընենք «Մասիսին»։ Պոլսէն գնացող ուսուցիչներէն քանին վերոյիշեալ յատկութիւններն ունին։

Հայաստանի դպրոցաց վերատեսուչ պ. Սարբեան Պոլսէն գնացած խումբ մը ուսուցիչներու անուններ տուաւ մեզ, որոնք ոչ թէ ուսուցիչ, այլ դպրոցի մը դռնապան ըլլալու արժանիքը չունին։ Ոմանք պարզապէս ապուշներ են եղեր արդէն և ոմանք ալ ցնորված հոսումներ։ Եթէ պահանջուի այս տեսակներու անուանց ցանկ մը՝ հրատարակելու պատրաստ եմ։ Պոլիսը մի քանի վէ պ ուսներ Հայաստան դրկելով Հայաստանի լուսաւորութիւնը դլուխ հանած չը լինիր։

Գալով Բ. փաստին թէ Պոլիս դրքեր և լրագիրներ կը դրկէ Հայաստան, պիտի պատասխանեմ թէ այդ խրկուած դրքերը և լրագիրները ազդեցութիւն մը չեն ունենար ժողովրդին վրայ, որովհետև դոքա ժողովրդին մտաց մէջ յառաջդիմական դաղափարներ, իւր դոյութեան հետ կապուած խընդիրներ չեն մշակեր և քարոզեր։ Ը դիտեմ թէ Պոլսոյ մամուլ ըսելով իմ հակառակորդները ինչ կը հասկընան, նոյն իսկ Պոլսոյ ճնշող մեքենաներէն յառաջ եկած գործերը, թէ նոյն իսկ պոլսեցոյ ըղձէն ծնուածները։

Խրիմեան հայրիկի և նորա աշակերտների գործերը, որոնք գրեթէ միակ ժողովրդական դրքերն են Կ. Պոլիս հրատարակուած, պէտք է Կ. Պոլսոյ մամուլը սեպել։ Այդպէս շատ սխալ կը լինի. Խրիմեան հայրենիքի ծոցին մէջ մնած և մեծցած մէկ մարդ է, նա Պոլսէն չը վերաբերեր։ Պեշիկթաշլեանի նմանները, որոնք չափազանց քիչ բացառութիւններ են, կը յարդենք, (պէտք է դիտնալ որ այսպիսիներն ալ Կ. Պոլսէ դուրս կրթուած են)։

Եթէ Պոլիսը, եթէ Պոլսոյ հայ մամուլը իր լրագիրներով պիտի պարծենայ, ահա ամենէն լաւագունն՝ «Մասիսի» պատկերը սոյն յօդուածիս մէջն է։

Եթէ Պոլսոյ մամուլը իր ապած և տարածած հայ դաղդիքերով պիտի պարծենայ, թող ամէնայ տեսնելով 19-րդը ապագրութեան արժանացուցածից, Մարկոսեանի քրիստոնէական ուսման դասագիրքը, որ զոկմատիքական խայտառակ ձեռնարկ մի է, որուն առաջին երեսին վրա դրարար հաստատմէն է դրած, զոր երեխան տաժանելի աշխատութեամբ պարտաւոր է գոց ընել։ Քանի թարմ մոքեր թմրած և ապշած են այդ տեսակ յոռի դասագիքերու վրա, քանի ազնիւ և զգայուն սրրտեր կոչտացած են անգութ պոլսեցի ուսուցչին բռնութեանց տակ և քանի ժողովրդական կեանքի փորձառութեամբ դտնուած, ճշմարիտ և սուրբ դաղափարներ եղծուած և խանդարուած են թեթեւամիտ պոլսեցուն ա գ ա տ ա խ օ ս ո ւ թ ե ա մ բ։

Պոլսեցիները մեծ մասամբ կարհամարհեն հայաստանցի հայերը և այսօր ապացոյց ահա վերև յիշուած յունվար 11 թիւ «Մասիսի» յօդուածը՝ որով պ. Բիւզանդ դաւառացի հայերը կանուանէ «կոչտ, անկիրթ, ինքնասէր, գծուծ, սորկամիտ, և կրօնքէ դատ ուրիշ ամէն բանով տաճկացած»։ Երբ մարդ մէկը կարհամարհէ, չէ կարող նրա օգուտը մտածել. եթէ օգնել ալ ուզէ՝ հակառութեան մէջ ինկած կը սեպուի։

Յօդուածս երկար չընելու համար կնդրկայնեմ խօսքս. չը նայելով պ. Բիւզանդի հետեւեալ փաստին որ կըսէ «Ինչպէս մեր նախնեաց օրով, երբ ազգային թագաւորութիւնք և իշխանապետութիւնք կային, կրթութիւն, դրականութիւն և լուսաւորութիւն Կ. Պոլսէն կուդային մեզ, նմանապէս և մանաւանդ այժմ պիտի դան։»? Պոլիս չէ կարող Ցաճկա-Հայաստանի լուսաւորութեան ղեկավարը լինելու և մինչև այսօր չօչափելի և ոչ մէկ օգուտ տուած չէ և տալու ալ կարողութիւնը և հանդամանքը չունի։ Այստեղ խիղճս ինձ կը ստիպէ աւելացնել թէ Պոլիսը մինչև այսօր իր կրթական անընդունակ գործիչներով բաւական մեծ վնաս հասուցած է։

Պոլսոյ տուած օգուտը Ցաճկա-Հայաստանին, վնասին հետ անհամեմատական է։

Թող չը բարկանայ «Մասիսը» եթէ ես անկեղծութեամբ հրաւէր կարդամ բոլոր զարգացած հայերուն և մանաւանդ Թիֆլիզի ինտելիգենցիային, որ ուշադրութեան առնեն այս հարցը և հասկնան որ Պոլիսը անկարող է Ցաճկա-Հայաստանի կրթական գործը առաջ տանելու։

«Մասիսը» այն թերթն է, որ պօլսեցոյ կեանքը կը ներկայացնէ իր ամէն կերպարանքներովը։ Մի քանի գիտնական մասնաւոր աշխատակիցները մէկ դի առնելով «Մասիսը» հոսումներու արձագանքն է։

* * *

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» լրագրին Վարնայից գրում են, իբր թէ այս օրերս, Դամասկոսում, ֆրանսիական հիւպատոսը անցնելով նահանդապետի պալատի մօտով, պահապան զինուորը նրան զինուորական պատիւ չը տուեց։ Հիւպատոսը հրամայեց իր կավասին ծեծել զինուորին։ Միւս զինուորները օգնութեան հասան իրանց ընկերոջը, և եթէ թիւրք օֆիցերը չը վրա հասներ, երևի հիւպատոսը էժան չէր պրծնի։ Դամասկոսի նահանդապետը պահանջում է այժմ, որ ֆրանսիական կառավարութիւնը յետ կանչի չափից դուրս բարկացկոտ հիւպատոսին։

—«Բէյտերի գործակալութեան» Կ. Պոլսից ստացած հեռագիրը հերքում է անգլիական լրագիրների հաղորդած լուրը, որ իբր թէ Բ. Դուռը հրամայեց Արևելեան-Ռումելիայի նահանդապետ Ալէքսիաչային ներողութիւն խնդրել ռուսաց հիւպատոս Կրէբէլից։

—Փարիզի «Gaulois» և «Figaro» լրագիրները, որոնք ամենաանխիղճ կերպով փաստերը աղաւաղելու սովորութիւն ունեն և միապետական կուսակցութեան օրգաններն են համարվում, մի քանի օր առաջ տպեցին, իբր թէ ֆրանսիական նոր պատերազմական մինիստր Տիրօդէն, 1870 թուին, գերի ընկաւ Սեդանի մօտ, բայց ազատութիւն չնորհեցին նրան, երբ ստորագրութիւն տուեց, թէ այլ ևս չի մասնակցի պատերազմական գործողութիւններին պրուսացիների դէմ։ Տիրօդէն, այնու ամենայնիւ, վերոյիշեալ լրագիրների խօսքերով, շուտով նորից մտաւ ֆրանսիական զօրքի շարքերում գնդապետ Կօմանիի անունով և մասնակցեց մի քանի կռիւներին, որի համար «պրուսական զինուորական դատարանը» մահուան պատժի դատապարտեց նրան։ «Voltaire» լրագրում Տիրօդէն խիստ կերպով բողոքում է այդ մեղադրանքների դէմ և ապացուցանում է, որ ինքն չէ դաւաճանել տուած խօսքին։ Նա հաւատացնում է, որ Գրավելօտտում վիրաւորված լինելով, նա գերի ընկաւ և հիւանդանոցում պառկեց, իսկ յետոյ իր խնդիրքի համեմատ, թոյլ տուին նրան հայրենիք գնալ առողջանալու համար, որովհետև զինուորական ծառայութեան համար անընդունակ էր ճանաչված։ Ոչ մի թուղթ նա չէ ստորագրել, ոչ մի խոստմունք նա չէ տուել։ Տիրօդէն բնակութիւն հաստատեց Նիէվրեան դէպարտամենտում։ Հանդիպելով պրուսական ուլանների զօրաբաժնին, նրա մէջ նորից վառվեց «ազգասիրական սիրտը» և նա զիմեց Գամբէտտային խնդրելով, որ թոյլ տայ իրան վերադառնալ կրկին ծառայութիւն, և Գամբէտտան թոյլտուութիւն տուեց։ Նա հրամանատար էր առանձին զօրաբաժնի, որը անուանվում էր «Տիրօդէնի զօրաբաժին», կրկին անգամ վիրաւորվեցաւ Շատօ-Մոնրէլիարի մօտ, և, վերջապէս, երբ պատերազմական գործողութիւնները վերջացան, նրա գործը քննիչ յանձնաժողովին յանձնեցին, որը յայտնեց, թէ Տիրօդէն իր պարտքը կատարեց հայրենիքի վերաբերութեամբ։

—«Spectator» լրագրի թղթակիցը հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում Նօրվէգիայի թագաւորի և ստօրթինգի (ներկայացուցիչների ժողով) մէջ եղած անհամաձայնութիւնների մասին։ Այդ երկպառակութեան սկիզբը դրվեցաւ 1872 թուին, երբ ստօրթինգ, 80 ձայների մեծամասնութեամբ 29-ի դէմ, ընդունեց մի օրինագիծ, որով մինիստրները պարտաւորվում են ներկայ գտնվել պարլամենտական վիճաբանութիւնների ժամանակ, որպէս ընդունված է ուրիշ սահմանադրական երկիրներում։ Թագաւորը չը հաստատեց այդ օրինագիծը և առաջարկեց հետեւեալ ստօրթինգին մի շարք սահմանադրական փոփոխութիւնների, բայց կառավարութիւնը մերժեց նրանց միաձայն։ Մինիստրութիւնը ստիպված էր հրաժարական տալ, բայց թագաւորը չընդունեց այդ հրաժարականը։ Նօրվէգական օրէնքով, եթէ որ երկք ստօրթինգը կարգով, որոնց անդամները երեք տարով են նշանակվում, ընդունում են առանց փոփոխութեան մի և նոյն առաջարկութիւնը, այն ժամանակ այդ վերջինը օրէնքի ոյժ է ստանում։ Նախագիծը կրկին երկու անգամ հաստատվեցաւ, բայց թագաւորը ընդդէմ էր նրան։ Այն ժամանակ սկսվեցաւ նոր, աւելի յամառ կռիւ, և թագաւորը իր veto ասեց ժողովի վճռի դէմ։ Մինչև անգամ պահպանողականները այն կարծիքի են, որ թագաւորի անհամաձայնութիւնը ժողովրդի կամքի հետ, մեծ սխալ էր։ 1881 թուի յունիսի 9-ին ստօրթինգ յայտնեց, որ իր վճիռը, սահմանադրութեան հիման վրա, օրէնքի ոյժ ունի։ Թագաւորը խստութեամբ բողոքեց և veto դրեց ստօրթինգի չատ վճիռների վրա։ Բայի դրանից թագաւորը չատ բանում համաձայն չէ ներկայացուցիչների հետ, որպէս են՝ երդուեալ դատաւորների հարցը, զօրքի վերակազմութեան, ձայնատուութեան իրաւունքի ընդարձակման հարցը և այլն։ Բայց, այնու ամենայնիւ, փետրվարի 2-ի ընտրութիւններից յետոյ աւելի զօրեղ ազատամիտ մեծամասնութիւն կազմվեցաւ, որը պատրաստ է կրկին նոր ոյժով կռիւը շարունակել։ Կարծում են, որ հաշտութիւն հաղիւ թէ կարող է կայանալ։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի։ Երէկ պարահանդէս կար Ձմերային պալատի մէջ։ Էգուց անգլիական դեսպանութիւնը ի պատիւ Էդինբուրգեան դուքսի ճաշ կը տայ, ուր հրաւիրված են արտաքին գործերի մինիստրը, ծովային մինիստրութեան կառավարիչը և նաւատորմի բարձր օֆիցերներից շատերը։

ՄՕՍԿՎԱ, 28 յունվարի։ „Листокъ“ լրագիրը հաղորդում է, որ թագադրութեան ժամանակ խոդինկի դաշտի վրա ժողովրդին կը բաժանվեն միլիոն թաշկինակներ առատութեան աստուածուհու նկարով։ Հիւրասիրելու համար կը կազմվեն 16 աւազաններ 40,000 վեդրո պարունակութեամբ, կը բաժանվեն 800,000 բաժակներ։ Իւրաքանչիւր մարդու կը տրվի երկու տոմսակ, որոնցից մէկով կը ստացվի քաղցրեղէններ, իսկ միւսով ուտելեղէններ։ Դուման այդ ոճի համար 200,000 ռուբլ նշանակեց։

ՓԱՐԻԶ, 28 յունվարի։ Դատաստանական պալատայի կարգադրութեամբ իշխան Նապոլէօն արձակված է։ Ժիւլ Ֆերրի հրաժարվում է նոր մինիստրութիւն կազմելուց։

ԲԵՐԼԻՆ, 28 յունվարի։ Իշխան Բիսմարկի առողջութիւնը աւելի լաւ է։ Նա նորից պարապում է գործերով։ Արևելեան սահմանական երկաթուղիներին կից մի այլ երկաթուղու կառուցման նախագիծը առ ժամանակ յետաձգված է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունվարի։ Յունվարի 27-ին թագաւորը այցելեց Միխայլովկայա արտիլերիական ակադեմիա և ուսումնարանը, նոյնպէս և պոլիտեխնիկական և զինուորական-վիրաբուժական ուսումնարանները։ „Рус. Вѣдом.“ լրագրի ողբերգական պատմութիւնը Սամարայի մէջ մեռած կարծված Տիխանովի թաղման մասին „Прав. Вѣстн.“ լրագրի մէջ հերքվում է։ Ժուկովսկու յօբելեանի առիթով լրագիրները նուիրում են նրան յօդուածներ, ստանաւորներ, առաջ են բերում նրա մաքերը և թարգմանում են նրա բարեգործութիւնները։ Էգուց մեծ թատրոնի մէջ Ժուկովսկու հեղինակութիւններից կազմված ներկայացումից յետոյ կը պսակեն բանաստեղծի կիսարձանը։ Ակադեմիկ Բէկօբրաշովին յանձնված է կազմել Մոսկվայի աշխարհանդէսի նկարագրութիւնը։

ԲԵՐԼԻՆ, 29 յունվարի։ Փարիզից ստացված մասնաւոր լուրերը հաղորդում են, որ „Union Nationale“ և „Capital Union Provinciale“ կրակի դէմ ապահովող ընկերութիւնները սնանկացած են յայտնված։

ԿԻՇԻՆԷՎ, 20 յունվարի։ Դուման 20,000 ռուբլ նշանակեց Կայսր Ալէքսանդր II-ի արձանի կառուցման համար, որի բացումն տեղի կունենայ այս տարի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունվարի։ Օդէսսայի, Դերպտի, Սամարայի, Նովգորոդի, Կրօնշտատտի և Վիատկայի մէջ հանդիսով տօնվեցաւ Ժուկովսկու յօբելեանը։

ԲԵՐԼԻՆ, 29 յունվարի։ Այստեղի զինուորական շրջանները պահանջում են, որ դերմանական զօրքերի մէջ ընդունվեն կրկնողական հրացաններ, որովհետև նրանցով զինուորված են ֆրանսիական զօրքերը։ Կայսրի առողջութիւնը աւելի լաւ է, թէպէտ նա դեռ չէ դուրս գալիս։

ՓԱՐԻԶ, 29 յունվարի։ Սենատը քննում է արքայազն իշխանների մասին օրինագիծը։ Արդարութեան մինիստրը կառավարութեան կողմից պաշտպանում է պատգամաւորների ժողովից վաւերացրած միջոցները։ Եթէ սենատը նրանց ընդդէմ կը լինի, կառավարութիւնը պատրաստ է համաձայնութիւն կայացնել։ Իշխան Նապոլէօն ուղևորվում է Անգլիա կայսրուհի Եւգենիային այցելելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի։ Այսօր կէսօրից յետոյ 2 ժամին երդվեալ դատաւորների որոշմամբ Ս. Պետերբուրգի փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ կատարված զեղծումների գործի մասին Սինեբրիւխով, Ժադիմերովսկի, Պոդրեբով, Կիրշբաում, Եմելեանով, Մեյեր և Վիկտոր Պոսպէեվ մեղադրված են կեղծելու և վատնելու համար։ Մնացած մեղադրվածները արդարացրած են։ Առաւօտեան 5 ժամին յայտնվեցաւ դատավճիռը։ Բոլոր յանցաւորներին իրաւունքներից զրկելուց յետոյ աքսորել. Կիրշբաումին Իրկուտսկի նահանգը 3 տարով, իսկ մնացածներին Տոմսկի նահանգը։ Քաղաքային գործը առանձին քննել։ Միջնորդել, որ Պոսպէեվի աքսորը փոխարինվի մի տարի կալանաւորութեամբ։ Դատաստանական ծախսերը առնել մեղադրվածներից։ Փոխադարձ պատասխանատուութեամբ։ Սինեբրիւխով, Ժադիմերովսկի, Պոդրեբով և Մեյեր դրաւականներ ներկայացրին և ազատ են թողված, մնացածները կալանաւորված են։ Երէկ Ալէքսանդրօ-Նեվսկի մայրեկեղեցու մէջ վարչութեան և դրական գործիչների ներկայացուցիչների առաջ Մոսկվայի միտրոպոլիտը կատարեց Ժուկովսկու հոգեհանդիսը։ Հոգևոր ակադեմիայի ռեկտոր Եանիշեվ քարոզ կարդաց Ժուկովսկու նշանակութեան մասին իբրև քրիստոնեայի և նրա ազդեցութեան վերաբերութեամբ իբրև Ազատող-Թագաւորի կրթողի։ Գերեզմանի վրա մաղթանք կատարվեցաւ և պսակներ դրվեցան, որոնց մէջ էր և պսակը Թագաւորից և Թագուհուց։ Այսօր գիտութիւնների ակադեմիան տօնում է Ժուկովսկու յօբելեանը հանդիսաւոր նիստով։

ՓԱՐԻԶ, 30 յունվարի։ Արքայազն իշխանների օրինագծի քննութեան շարունակութիւնը սենատը յետաձգեց մինչև երկուշաբթի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է հետեւեալ դները առաջին հարկաւորութեան մթերքների վրա փետրվարի 1-ից մինչև 15 փետրվարի։ Թխած հացը կրուպչատկա ալիւրից ֆունտը արժէ* $5^1/_2$ *կոպէկ։*

*Յորենի ալիւրից առաջին տեսակի ֆունտը* $3^1/_2$ *կոպէկ, երկրորդ տեսակի 3 կոպէկ։*

*Նոյն ալիւրից թօնրի մէջ թխած հացը առաջին տեսակի ֆունտը* $5^1/_2$ *կոպէկ, երկրորդ տեսակի 4 կոպէկ, երրորդ տեսակի* $3^1/_2$

կոպէկ։

Կրուպչատկա ալիւրից թխած հացը խառնելն ցորենի ալիւրի հետ, լաւագները առաջին տեսակի ֆունտը արժէ $5^1/_2$ կոպ., երկրորդ $4^1/_2$ կոպ., երրորդ 4 կոպէկ։

Միսը տաւարի առաջին տեսակի ֆունտը արժէ 10 կոպ., երկրորդ 9 կոպ., սուկի 16 կոպ., ոչխարի միսը ֆունտը արժէ 11 կոպ., խոզի միսը ֆունտը 11 կոպէկ։

1—1

---

ОБЪ ИЗДАНІИ

въ 1883 году

**ВЪ ТИФЛИСѢ**

Еженедѣльнаго юридическаго журнала

## „ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

(ГОДЪ ТРЕТІЙ)

*Редакція.* Тифлисъ, Давидовская улица, домъ Кананова.

*Администрація.* Тифлисъ, Сололакская ул. д. кн. Меликова.

**ПОДПИСНАЯ ЦѢНА:** съ доставкою и пересылкою, на годъ 10 р., на 9 мѣс. 8 р. 20 к., на 6 мѣс. 6 р., на 3 мѣс. 3 р. 20 к., на 1 мѣс. 1 р. 20 к.

Издатель **А. С. Френкель**
Редакторъ **А. В. Степановъ**

---

**ԵՐԵԻԱՆԵԱՆ ԳՈՒՆԴԸ** յայտնում է, որ մարտի 1-ին առաւօտեան 10 ժամին գունդի գրասենեակի մէջ Մանզիլսում կը լինի **ԱՃՈՒՐԴ** գունդին մատակարարելու համար ուտեստներ, լուսաւորող մթերքներ և նիւթեր և կանցելարական պատկանելիքներ 1883 թուականի մայիսի 1-ից մինչև 1884 թուականի մայիսը։

3—3

---

**ԾՈՎԱՅԻՆ ԽՈՏ** մեծ քանակութեամբ 2 ր. 40 կ. պուդը, իսկ մի հակ (մօտ 9 պուդ) առնողների համար 2 ր. 20 կ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ նոյն տեղը լապտերներ 30 կոպէկից, ԹԷՅԱՄԱՆՆԵՐ 35 կ., 100 ասեղը 8 կ., պատառակներ 20 կ., կոնֆետներ լուծողական ձէթից, ՓՕՇԻ լուացքի համար։ Բժշկական ԹՈՒՂԹ վատեր-կլօզետի համար։ ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը։ Մակինտօշներ 6 ր. և այլն։

8—10

---

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲԺՇԿԱՆՈՑԻ դիրեկտոր Լիսիցով յայտնում է որ բժշկանոցի մէջ ամեն օր լինում է հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամ կէսօրից յետոյ։ Ամեն օր հետևեալ բժշկներ են ընդունում. Յարութիւնեան ժամը 9-ից մինչև 10 ներքին հիւանդութիւններով, Միրզօեվ և Լիսիցեվ 10—11 ժամ ներքին հիւանդութիւններով, տիկին Պոտապովա 11-ից մինչև 12 ժամ, կանանց և երեխաների հիւանդութիւններով, Նաւասարդեանց 12-ից մինչև 1 ժամ վիրաբուժական և սիֆիլիտական հիւանդութիւններով։ Բացի սրանից Գ. օրալեվիչ (երկուշաբթի օրերը 10—11 ժամ) ընդունում է ներքին հիւանդութիւններով, Մէլիքօվ (երեքշաբթի և հինգշաբթի օրերը 12—1 ժամ) կանանց և երեխաների հիւանդ., Մինկեվիչ (երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 ժամ) վիրաբուժական հիւանդ., Բէյլիս (երեքշաբթի և շաբաթ օրերը 10—11 ժամ) աչքի հիւանդ. Բախուտով (երեքշաբթի օրերը 11—12 ժամ) մանկաբարձական, կանանց և երեխաների հիւ., Բաբաև (երեքշաբթի և շաբաթ 11—12 ժամ) ներվային և ներքին հիւ., Կրասնոգլիադով (չորեքշաբթի և ուրբաթ 10—11 ժամ) ներքին հիւ., Եանկովսկի (ուրբաթ և շաբաթ 11—12 ժամ) ներքին և վեներական հիւանդութիւններով։ Իսկ իր տանը ամեն օր ընդունում է առաւաւոտյ Վոլֆզոն այն աղքատ հիւանդներին, որոնք բժշկանոցի տոմսակ են ներկայացնում։

---

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

## „ԱՂԲԻՒՐ“

ամսագրի I համարը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Շնորհաւոր նոր տարի, բանաստեղծութիւն. . . . . Ղ. Աղայեանց
II Ուրիշի բունը քեզ բուն չի դառնալ. ծիծեռնակների կեանքից—օր. Մ.
III Օձամանուկ և Արևահատ ազգային հէքիաթ. . . . . Ղ. Աղայեանց
IV Թագաւոր և Արհեստաւոր (վրացերէնից). . . . . օր. Ն. Տ. Մ.
V Աղաւնիներ (Տուրգենևից) Ռաֆֆի։
VI Հեռաքրքիր լուրեր. Զուարճալիք։
VII Հանելուկներ, շուտասելիքներ բերուներ, շախմատի, թուաբանական խաղեր և այլն։
VIII Թիթեր, նոտաներով երգ.

Երկրորդ բաժին.

I Խմբագրութեան կողմից.
II Մատենախօսութիւն՝ իմ նամակները Գաբ.
III Մահացուցակ.
IV Խառն լուրեր.
V Առաջարկութիւններ.
VI Պատասխաններ.

Յայտարարութիւններ

Որովհետև ամսագրի կազմի նկարը Պետերբուրգից պէտք է ստացուի ամսոյս 25-ն այդ պատճառով յունվարի համարը ստիպված կը լինենք միայն ամսոյս վերջին ուղարկել բաժանորդներին։

Տ. Նազարեանց

---

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

---

Մի գերմանուհի տիկին, վիեննացի եկած, միջին հասակի, կը կամենար ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ կամ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՀՈՒ պաշտօն ունենալ Թիֆլիսի մի լաւ ընտանիքում։ Կարող է և գաւառները գնալ։

Հասցէն „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

8—10

---

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին հասցնել ՋԱՐԳԱԾ ՔԱՐԵՐ 140 կուբ. սաժ. քանակութեամբ հետևեալ փողոցները նորոգելու համար. Ապտէնայա, Նիժնէ-Սադովայա, Ելիզավետինսկայա, Բուլվարնայա, Լազարեվսկայա, Կախետինսկայա և Վօրոնցօվսկայա։ Ցանկացողները պէտք է ներկայանան ամուրդին վարչութեան դիւանատան մէջ փետրվարի 1-ին ներկայ տարվայ առաւօտեան 12 ժամին։ Պայմանները և այդ հարցին վերաբերեալ բոլոր թղթերը կարելի է տեսնել ամեն օր վարչութեան դիւանատան մէջ առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը։

3—3

---

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

| | | | |
|---|---|---|---|
| 1 ր. | 10 կ. | թէյի հետ ամենատեղ 1 ր. | 30 կ. |
| 1 „ | 20 „ | . . . . . 1 „ | 60 „ |
| 1 „ | 40 „ | . . . . . 1 „ | 90 „ |
| 1 „ | 60 „ | . . . . . 2 „ | 20 „ |
| 1 „ | 80 „ | . . . . . 2 „ | 50 „ |
| ամենալաւը | 2 ր. | . . . . . 3 „ | —— |

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաո-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բազրի կոնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Տուրնելի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի ըեվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, կօլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբօմներ և այլն և այլն։

57—100

---

ՌԱՖՖԻ

## ԽԱՄՍԱՅԻ

ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆՆ է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաճեանցի Ծխախոտի խանութում.—Պ. Շահինեանցի Ծխախոտի խանութում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով։

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.
*РАФФИ.*

---

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

23—50

---

## ՂԱՐԱԲԱՂԻ

ԱՍՏՂԱԳԷՏԸ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊԼԱՏՕՆ ԶՈՒԲՈՎԻ

ԹԱՐԳՄԱՆՅԱ ՌԱՖՖԻ

Թիֆլիսում գինն է 1 ր. 20
Թիֆլիսից դուրս . . . 1 ր. 50

Վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը. „Կենտրոնական գրավաճառանոցում.“ Զաքարիայ Գրիգորեանի „Կովկասեան գրավաճառանոցում.“ պ. Շահվերդեանի գրավաճառանոցում. պ. պ. Շահինեանցի Տէր-Գրիգորեանցի Ծխախոտի մագազինում։

---

ԵՐԿԱԹԷ



ԱՆԳԼԻԱԿԱՆ

Մի հոգու համար 8 բուբլուց, կ[illegible] կու հոգու համար 14 ր., մահճաձ[illegible] ծովային խոտով լցված 6—9 ր. **ԱՆԳ[illegible] ԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ** նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներ[illegible] երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թիթեղ[illegible] աղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ[illegible] մատուցարաններ, ԿԼԷՕՆԿԱ, բէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբօմներ, կոնֆեկտներ, ԹԷՅ 1-ին հունձի և այլն 25[illegible] աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։

22—10

---

ԳԱԼԵՐԷԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՑՕՎԱՅԱ ՓՈՂՈՑ
ՊԱՀԵՍՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, վիէննայի ԹՕՆԷԹ ֆաբրիկայի ՄԷԲԵԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՉԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմայլով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

---

ՎԻԷՆՆԱՅՈՒՄ ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ

# L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր [illegible] գիրը։ „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 բուբլ է, կէս տարվանը 4 բուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում գրելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt

Дозволено цензурою, Тифлисъ, 31 Января 1883 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.